7. https://hy.wikipedia.org/wiki/Վեր-սերվեր
8. https://neonkaraoke.ru/hy/internet/ponyatie-oblachnyh-tehnologii-harakteristika-osnovnyh-tipov-oblachnyh/
9. https://sistyle.ru/blog/item/30-clouds-advantages/
10. https://www.datafort.ru/blog/the-types-of-clouds.html

СТЕПАН АКОПЯН
Информационные системы,
бакалавриат, 1-й курс

ПРИМЕНЕНИЕ ОБЛАЧНЫХ ТЕХНОЛОГИЙ В БИЗНЕСЕ НА ПРИМЕРЕ АРМЯНСКОГО РЫНКА

Ключевые слова: *бизнес, облако, технологии, производительность, оценка, приложение, рынок, аналитика*

В статье изучен и проанализирован принцип ведения бизнеса *с помощью облачных хранилищ данных, возникшим в результате развития вычислительных машин и вычислительных сетей, которые в последнее время стали популяризироваться. Эта технология позволяет хранить информацию на удалённых серверах, выделенной облачным сервисом. В статье анализируются и оцениваются возможности применения технологии удаленного доступа к данным в РА как метода организации бизнеса на основе анализа преимуществ, недостатков, особенностей.*

STEPAN HAKOBYAN
Information Systems, Bachelor's Degree, 1st Year

THE APPLICATION OF CLOUD TECHNOLOGIES IN BUSINESS WITH THE EXAMPLE OF THE ARMENIAN MARKET

Key words: *business, cloud, technology, performance, evaluation, application, market, analytics*

The article analyzes the operation of business with the help of cloud data storage, which arose as a result of the development of computers and computer networks. It has gained its popularity during recent years. This technology allows you to store your information in the memory of remote servers allocated by a trusted cloud service. The article also analyzes and assesses the possibilities of using remote data access technology in Armenia as a method of business organization, based on the analysis of advantages, disadvantages, features.

ՔՐԻՍՏԻՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Հաշվապահական հաշվառում և հարկում,
բակալավրիատ, 3-րդ կուրս

ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ՀՊՏՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Հիմնաբառեր. *հեռավար կրթություն, տեղեկատվական հաղորդակցություն և տեխնոլոգիաներ, արդյունավետություն, կրթական համակարգ*

Հոդվածում փորձ է արվել բացահայտելու հեռավար կրթության խնդիրները COVID-ի պայմաններում՝ ՀՊՏՀ օրինակով: Հեռավար կրթությունը կրթական ծրագրի այլընտրանքային ձև է, որին կրթական համակարգը դեռևս պատրաստ չէր թե՛ գործըն-

թացն անխափան կազմակերպելու անհրաժեշտ գործիքակազմին, թե՛ հմտություններին տիրապետելու առումով:

Ներածություն: Համավարակը մեզանից խլեց միլիոնավոր մարդկային կյանքեր ու մեր ժամանակը: Այն, ինչը պետք է բնականոն կերպով հասցնեինք անել 2 տարում, 2 և ավելի տարով հետաձգվեց: Փակվեցին գրեթե բոլոր երկրների սահմանները, լուծարվեցին հազարավոր աշխատատեղեր և, որ ամենակարևորն է, բոլոր ուսումնական հաստատություններն անցան հեռավար կրթության:

Հեռավար կրթությունն սկսեց կիրառություն ստանալ դեռևս մի քանի տարի առաջ, երբ մեծահասակներն ընտրեցին տան պայմաններում կրթություն ստանալու և կատարելագործվելու կամ աշխատանքն ու ուսումը զուգակցելու ճանապարհը: Ուսուցման ընթացքում հիմնականում օգտվում էին համընդհանուր ճանաչելի էլեկտրոնային կայքերից՝ ծրագրակազմով պարբերաբար ստանալով ուսումնական նյութերը, ապա հետ էին ուղարկում կատարված աշխատանքը:

Ժամանակակից տեխնոլոգիաների շնորհիվ հեռավար ուսուցումն էական զարգացում է ապրել: Այն իրականացվում է համացանցով, և ուսանողները կարող են անգամ գիտական աստիճաններ ստանալ՝ առանց ավանդական դասասենյակը տեսնելու: Կարճ ասած՝ հեռավար ուսուցման առաջընթացը հեղափոխել է անընդհատ կրթության ոլորտը:

Հեռավար կրթության **առավելություններն են.**

- համացանցը կատարյալ միջոց է վիրտուալ ուսումնական միջավայր ստեղծելու համար: Սովորողները կարող են, օրինակ, մնալով իրենց բնակավայրում, սովորել արտասահմանում գտնվող վիրտուալ համալսարանում:
- Դասընթացները սահմանափակված չեն դպրոցի կամ համալսարանի աշխատանքային բնականոն ժամերով, բոլորի համար անընդհատ կրթության նոր հնարավորություններ են բացվում:
- Հեռավար ուսուցումը փոխում է ինչպես սովորողի, այնպես էլ դասավանդողի վարքագիծը: Լավ սովորողները ավելի կազմակերպված ու նպատակասլաց են դառնում, իսկ դասավանդողները զարգացնում և կատարելագործում են արդի տեխնոլոգիական գիտելիքներն ու հմտությունները:
- Դասախոսներին հնարավորություն է ընձեռվում կազմակերպելու ավելի անհատականացված ուսուցում. քանի որ ուսանողները տնային հանձնարարություններն անհատապես ուղարկում են դասախոսին, ապա վերջինս դրանք առավել ուշադիր է ստուգում, առկա թերությունները քննարկում:
- Հաճախ հանդիպող և քննարկվող խնդիրներից է, թե ինչպես են ուսանողները բացասաբար ազդում միմյանց վրա, ինչպես են խոչընդոտում մյուսների մասնակցությունը դասապրոցեսին, ազդում մեկը մյուսի առաջադիմության վրա և այլն: Դասախոսները միշտ չէ, որ տեղյակ են լինում կամ կարողանում են համապատասխան արձագանք տալ նման-օրինակ դեպքերին: Իսկ դասերի առցանց կազմակերպման պարագայում հասակակիցների կողմից ճնշումները և դրանց բացասական ազդեցությունը նվազում է: Սա հնարավորություն է տալիս ուսանող-

ներին կենտրոնանալու հենց դասապրոցեսի վրա, սովորելու և ստանալու այս ամենից առավելագույնը:

Հեռավար ուսուցման **բացասական կողմեր-խոչընդոտները**

Հեռավար կրթության կազմակերպման ընթացքում դիտարկվել են հետևյալ թերություններն ու խոչընդոտները.

- *ուսանողների թիվը* – համալսարանում մեկ խմբում սովորող ուսանողների թիվը սովորաբար միջինում 25-30 հոգի է: Նման մեծ լսարանում առցանց դասի կազմակերպումը և իրականացումը բավականին բարդ խնդիր է: Եթե դասախոսություն է, ապա ուսանողների թիվն էական չէ: Սակայն, գործնական հանձնարարությունների առավելագույն արդյունավետության համար ցանկալի է, որ դասին մասնակցի ամենաշատը 10-12 հոգի՝ լսարանն ու դասապրոցեսը վերահսկելի դարձնելու նպատակով, ինչպես նաև հետադարձ կապն ուսանողների հետ առավել արդյունավետ պահելու համար (հաշվի առնելով ի հայտ եկած նոր տեխնիկական խնդիրները):
- *Տեխնիկայի հասանելիությունը* – ուսանողներից ոչ բոլորն ունեն անհրաժեշտ տեխնիկական սարքեր՝ հեռավար կրթությանը մասնակցելու համար, ինչի հետևանքով, ցավոք, եղել են այնպիսի ուսանողներ, որոնք դասերին մասնակցելու հնարավորություն չեն ունեցել: Թեպետ մեր համալսարանն օգնեց կարիքավոր ուսանողներին՝ տրամադրելով նրանց որոշակի տեխնիկական միջոցներ, սակայն չենք կարող պնդել, որ այդուհանդերձ կրթությունը հասանելի եղավ բոլորին:
- *Տեխնիկական խնդիրներ* – լավագույնս կազմակերպված համակարգերում անգամ, եթե կա տեխնիկայի օգտագործման անհրաժեշտություն կամ հնարավորություն, թերություններից կամ տեխնիկական խնդիրներից ամբողջությամբ խուսափելը գրեթե անհնար է: Առցանց ուսուցման գործընթացում էլ դասի հիմնական խոչընդոտներից են եղել տեխնիկական թերությունները՝ ինտերնետ կապի ցածր որակը, որը բավականին հաճախ խափանում էր ուսանողների կողմից ներկայացվող խոսքը, դուրս թողնում համակարգից և այլն: Ինչպես նաև պատահում էին էլեկտրաէներգիայի անջատումներ, ինչի հետևանքով տվյալ դասը լրացվում էր մեկ այլ օր կամ մեկ այլ ժամի:
- *Արդարության հարցը* – հանձնարարությունների կատարման ժամանակ հաճախադեպ էր, երբ ուսանողները դիմում էին օգնության: Սա առաջացնում էր այն ուսանողների օբյեկտիվ դժգոհությունը, որոնք ինքնուրույն էին կատարում հանձնարարությունները: Այս իրավիճակը հաճախ դասախոսին դնում է անելանելի վիճակի մեջ, քանի որ նրան գիտելիքի ստուգման համար լրացուցիչ հնարավորություններ չեն տրվում: Փաստարկները և զրույցներն այն մասին, որ կարևորը գիտելիքն է, ազնվությունը, որ պետք չէ նեղսրտել մյուսի բարձր գնահատականից, հաճախ այնքան էլ համոզիչ չէին դժգոհող ուսանողների համար:
- *Կենցաղային խնդիրներ* (աղմուկ) – հեռավար դասերի ընթացքում լինում էին դեպքեր, երբ լսելի էր տան աղմուկն ու իրարանցումը. Փոշեկուլի, հեռուստացույցի կամ պարզապես ընտանիքի անդամների ձայները:
- *Դասապրոցեսն ամբողջությամբ վերահսկելի չէ* – եղել են դեպքեր, երբ ուսանողները միացել են դասին, սակայն մասնակցության նշույլ չեն

ցուցաբերել, չեն արձագանքել իրենց ուղղված հարցերին, այնուհետև տեխնիկական խնդիրներով են պատճառաբանել իրենց «բացակայությունը»:

Գրականության ակնարկ: Forbes կրթության ղեկավար Ջուլիա Չերեպանովան իր հոդվածներից մեկում նշել է[1], որ ժամանակակից մարդու համար շատ դժվար է ընտրել արդյունավետ կրթաձևը: Չսխալվելու համար մեծ թվով գործոններ է պետք հաշվի առնել: Հեռավար ուսուցումը մի կողմից հեշտացնում է ամեն ինչ՝ հեռացնելով սահմանները և կարիերայի ընդմիջումների հարցերը, մյուս կողմից՝ միայն դժվարություններ է ավելացնում, քանի որ պետք է որոշել՝ արդյոք ունես բավարար մոտիվացիա և ինքնատիրապետում, արդյոք կարող ես տեղեկատվությունն ընկալել և գիտելիք ձեռք բերել՝ մոնիտորի մյուս կողմում նստած և այլն:

Ի. Կանտի անվան Բալթյան դաշնային համալսարանի[2] պրոֆեսոր Սվետլանա Լոնսկայայի խոսքով՝[3] առցանց ուսուցման դրական և բացասական կողմերի մասին վիճելը ներկայումս անիմաստ է, քանի որ ստեղծված հանգամանքներից ելնելով՝ ընտրություն չկա: Ըստ նրա՝ տեղեկատվական տեխնոլոգիաները կհեղափոխեն կրթությունը նույնքան, որքան տպագրության կամ նույնիսկ գրի գյուտը. կրթությունը գոյություն ունի միայն հաղորդակցական միջավայրում, իսկ միջավայրի փոփոխության հետ փոխվում է նաև կրթությունը: Գլխավորն այն է, որ այս ամենը չվերածվի թվայնացված անհավասարության, երբ ինչ-որ մեկը սովորում է միայն համակարգչով՝ հեռավար, իսկ մյուսը ստանում է էլիտար կրթություն (դասախոսի հետ շփվելով դասարանում կամ լսարանում):

MasterStart-ի[4] զարգացման գլխավոր տնօրեն Փոլ Լենսենը կարծում է, որ հեռավար ուսուցման ամենակարևոր գործոնը դասախոսի և ուսանողի կապի պահպանումն է[5]:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի հետ համադրելի, ինչպես նաև զարգացած որոշ երկրների հեռավար կրթության (ուսուցման) փորձին ծանոթանալու նպատակով ուսումնասիրվել են մի շարք երկրների[6] կրթության կառավարման մարմինների պաշտոնական կայքերը:

Վերոնշյալ երկրներից գրեթե բոլորի կրթական ռեսուրսներում առանձնակի կարևոր տեղեկություններ չկան արտակարգ իրավիճակում հեռավար ուսուցման կազմակերպման վերաբերյալ: Բացառություն է, թերևս, Էստոնիայի Հանրապետությունը, որի կրթության և հետազոտությունների նախարարության կայքում[7] առկա նյութերում կարևորվում է հեռավար ուսուցման գործ-

---

[1] https://education.forbes.ru/authors/onlineobrazovanie?fbclid=IwAR38O3CnG5MDJL05gA0umc7s4hnPBRtJQB0N95xqrqfTFDO3AYctRBThY5Q

[2] https://www.kantiana.ru/

[3] https://kantiana.ru/news/distantsionka-layfkhaki-po-onlayn-obucheniyu-ot-professora-bfu-im-i-kanta-svetlany-lonskoy/?fbclid=IwAR0n31vAOFHguK8IFOOoQPqWiI7u-nPgdPwXrazYDp5ZxvS9r2Ir7V 9e1Ug

[4] https://masterstart.com/the-masterstart-method/

[5] https://www.iol.co.za/technology/the-difference-between-online-learning-and-remote-learning-50287310

[6] https://www.izm.gov.lv/en/, https://www.smm.lt/main/web/en/, https://www.hm.ee/en, https://www.bmbf.de/en/index.html, https://minedu.fi/en/frontpage, https://www.gov.uk/government/organisations/department-for-education , https://wam.ae/en/details/1395302832135, http://www.eduyun.cn/, https://en.unesco.org/news/how-china-ensuring-learning-when-classes-are-disrupted-coronavirus , https://edition.cnn.com/2020/02/28/asia/remote-school-education-intl-hnk/index.html

[7] https://www.hm.ee/en

ընթացի արդյունավետ կազմակերպման առաջնային անհրաժեշտություններից մեկը՝ թվայնացված կրթական, ակադեմիական նյութերի առկայությունը: Էստոնիան կրթական նյութերի թվայնացման լայնածավալ գործընթաց սկսել է դեռևս 2015 թվականին: Կրթական նյութերի թվայնացմանը զուգահեռ՝ Էստոնիայի կրթության և հետազոտությունների նախարարությունն ակտիվ համագործակցություն է ծավալել մասնավոր հատվածի մի շարք ընկերությունների հետ, ինչի արդյունքում դեռևս 2016 թվականին մշակվել և հանրային օգտագործման են հանձնվել առցանց ուսուցման մի շարք կայքեր և հավելվածներ: Այս առումով, Էստոնիան ավելի պատրաստ է համընդհանուր հեռավար ուսուցման կազմակերպմանը: Ներկայիս իրավիճակում Էստոնիայի կրթության և հետազոտությունների նախարարությունը կրկին ակտիվացրել է իր փոխգործակցությունը մասնավոր հատվածի՝ կրթական-տեխնոլոգիական սեկտորին առնչվող ընկերությունների հետ (գլխավորապես՝ Startup Estonia, European EdTech Alliance, Estonian Union of Educational Technologists ընկերությունների հետ), ինչի արդյունքում հանրային օգտագործման է հանձնվել https://education-nation.99math.com/ կայքը:

Առանձին ուսումնասիրության նյութ է չինական կրթական համակարգի փորձը համավարակի օրերին[1]: Հենց Չինաստանում է կիրառվել կրթական համակարգի աշխարհի ամենամասշտաբային փորձերից մեկը: Նման բան երբևէ և ոչ մի տեղ չէր եղել. շուրջ 170 միլիոն աշակերտ և ուսանող հեռավար ուսուցում են ստանում: Հեռավար կրթության չինական համակարգը գործարկվել է զրոյից՝ ռեկորդային արագությամբ: Առաջին հերթին տեղադրվել են ներբեռնման համար անհրաժեշտ նյութեր, տարրական և միջին դպրոցի դասագրքեր, չինական դասական գրական ստեղծագործություններ և ֆիլմեր, երեխաների և ծնողների համար համավարակին դիմակայելու մոտիվացնող տեսագրություններ, ինչպես նաև համավարակի վերաբերյալ ուսուցողական տեղեկատվություն: Սովորողը կարող է ընտրել դասարանը, առարկան և թեման, որն իրեն հետաքրքիր է: Յուրաքանչյուր սովորող համակարգ մուտք գործելու համար ունի իր մուտքի ծածկագիրը: Դասերի մի մասն էլ տեղադրված է բաց ձևով: Դպրոցները, իրենց հերթին, փորձում են առցանց դասընթացներ ապահովել Վիչաթում[2] (Չինաստանում ամենահայտնի մեսենջերը): Դրանք կարող են լինել նախկինում ձայնագրված վիդեոդասեր կամ ուսուցչի հետ ուղիղ եթերներ:

Այս ամենի արդյունքում, կարող ենք փաստել, որ թեև COVID–19 համավարակը խաթարեց ուսումնական գործընթացի բնականոն գործունեությունը, այնուամենայնիվ, դրա արդյունքում կազմակերպված առցանց դասապրոցեսը, հանրակթության շարունակականությունն ապահովելու նպատակով, ուներ թե՛ իր առավելությունները և թե՛ թերությունները:

Մեթոդաբանություն: Հետազոտության ընթացքում կիրառվել և զուգակցվել են համակարգային և իրավիճակային, պատմական և տրամաբանական, վիճակագրական և գրաֆիկական վերլուծության, մակածության և արտածության մեթոդները: Հոդվածի գիտական և տեղեկատվական հիմքում ոլորտի առանցքային աշխատություններն ու հետազոտություններն են, հավաստի տվյալներն ու ոլորտի մասնագետների կարծիքները:

Հետազոտության արդյունքներ և քննարկում: ՀՊՏՀ ուսանողների համար Google form-ի տեսքով կազմվել էր 13 հարցից բաղկացած հարցաթերթիկ՝

[1] https://en.unesco.org/news/how-china-ensuring-learning-when-classes-are-disrupted-coronavirus
[2] https://ru.wikipedia.org/wiki/WeChat

ՀՊՏՀ հեռավար կրթության մասին, որը լրացրել են ՀՊՏՀ 110 ուսանողներ՝ բոլոր 6 ֆակուլտետներից[1]:

Հարց 1-ին. Հեռավար կրթության ընթացքում ի՞նչ խնդիրների են բախվել ուսանողները:



Գծապատկեր 1. ***1-ին հարցի արդյունքները***

- 42% - ողջ ընթացքում եղել են տեխնիկական խնդիրներ:
- 20% - դասընթացների ոչ ամբողջական յուրացում ու մատուցված նյութի թյուրըմբռնում:
- 12% - մոտիվացիայի կտրուկ անկում, ուսանողների կողմից անարդարության զգացողություն, այլ շեղող հանգամանքներ:
- 12% - դժվար է եղել ընկալել կոնկրետ առարկաներ (կենցաղային խնդիրներն են հիմնականում խոչընդոտել. ականջակալների/համակարգչի բացակայությունը, աղմուկը, քնած մնալը, տեսողական խնդիրները, հոգնածությունը):
- 8% - ոչ մի:
- 6% - ուսանողական կյանքի և դասընկերների հետ շփման բացակայության պատճառով միմյանց սատարելու, թիմային աշխատանքներ կատարելու, դասապրոցեսի մասին տեղեկություն փոխանակելու խնդիրներ:

Հարց 2-րդ. Քննությունների հեռավար անցկացումը ի՞նչ դժվարություններ կամ խնդիրներ էր առաջացնում:



Գծապատկեր 2. ***2-րդ հարցի արդյունքները***

[1] https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLScVz4vt86FvdtJT0Nd53gLFLYidEHXL6IqWgPzv5Hzofc-TTQ/viewform

- 39% - վերահսկողությունը թույլ էր, ինչը հնարավորություն տվեց ուսանողներին արտագրել և ստանալ բարձր նիշեր՝ խեղաթյուրելով իրական պատկերը:
- 34% - խնդիրներ չեն եղել:
- 14% - համակարգի, կապի խափանում:
- 7% - ժամանակի մեջ չտեղավորվելու խնդիրներ:
- 3% - դասախոսների թերահավատությունն ու կասկածները ուսանողների հանդեպ:
- 3% - դասախոսների՝ տեխնիկային չտիրապետելը:

Հարց 3-րդ. Արդյոք հեռավար կրթությունը չի՞ նվազեցնում մոտիվացիան:



Գծապատկեր 3. ***3-րդ հարցի արդյունքները***

- 60% - հաստատապես նվազեցնում է:
- 24% - ոչ, չի նվազեցնում:
- 16% - մասամբ է նվազեցնում:

Հարց 4-րդ. Կցանկանայի՞ք հեռավար և առկա (հիբրիդային) կրթաձևերի համատեղում COVID-ից հետո:



Գծապատկեր 4. ***4-րդ հարցի արդյունքները***

- 43% - հաստատապես ոչ:
- 31% - միայն խիստ տեսական առարկաների դեպքում արժե անցնել հեռավարի:
- 26% - այո, կարելի է արդյունավետ կերպով կիրառել այդ հնարավորությունը:

Հարց 5-րդ. Ըստ Ձեզ՝ հեռավարն իր բացասական ազդեցությունն ունեցե՞լ է մարդկային շփումների, ուսանողական կյանքի վրա:



Գծապատկեր 5. ***5-րդ հարցի արդյունքները***

- 70,68% - անշուշտ, ունեցել է:
- 18,6% - որոշ չափով ունեցել է:
- 10,72% - ոչ, չի ունեցել:

Հարց 6-րդ. Ի՞նչ կփոխեիք ՀՊՏՀ թե՛ առկա, թե՛ հեռավար կրթաձևերում:



Գծապատկեր 6. ***6-րդ հարցի արդյունքները***

- 41,6% - ոչինչ չէի փոխի, ամեն բան լավ է:
- 41,6% - դասերը դարձնել առավել ինտերակտիվ, հատկապես՝ դասախոսությունները (նոր մեթոդների կիրառում, ուսանող-դասախոս փոխվստահություն, նյութերի մատչելիություն):
- 10,40% - կրճատել լսարանում ուսանողների թիվը (երկու կրթաձևերում էլ):
- 6,4% - հեռավար կրթությունն ուղղակի հանել:

Հարց 7-րդ. Ըստ Ձեզ՝ քանի տոկոսով ՀՊՏՀ-ն հաղթահարեց COVID-ի մարտահրավերը՝ անցնելով հեռավարի:



Գծապատկեր 7. ***7-րդ հարցի արդյունքները***

- 43% - [70-ից 90]:
- 23% - [10-ից 30]:
- 17% - [40-ից 60]:
- 10% - [100]:
- 7% - չեմ կարող ասել:

Հարց 8-րդ. Ըստ Ձեզ՝ ինչպիսի՞ն կլինի հեռավար կրթությունը 10 տարի անց:



Գծապատկեր 8. ***8-րդ հարցի արդյունքները***

- 60% - դրական կարծիք (կլինի առավել արդյունավետ, տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց այն կհարմարեցվի առօրյա կյանքին և կլինի ավելի հասանելի, ավելի ճիշտ մոտեցում-ներով):
- 22% - բացասական կարծիք (բթացած մարդկություն, ռոբոտացում):
- 18% - լավ կլինի՝ ուղղակի չլինի:

Հարց 9-րդ. Արդյոք կարո՞ղ ենք արդյունավետ համարել հեռավար կրթությունը:



Գծապատկեր 9. ***9-րդ հարցի արդյունքները***

- 63,9% - մասամբ կարող ենք:
- 25,9% - ոչ, չենք կարող:
- 10,2% - այո, կարող ենք:

Հարց 10-րդ. Ձեր առաջադիմությունը հեռավարի ընթացքում աճե՞լ է, թե՝ նվազել:



Գծապատկեր 10. ***10-րդ հարցի արդյունքները***

- 54,4% - մասամբ աճել է:
- 35.9% - նվազել է:
- 9.7% - ակնհայտորեն աճել է:

Հարց 11-րդ. Հեռավար կրթությունը գնահատել 1-10 բալային համակարգով:



Գծապատկեր 11. ***11-րդ հարցի արդյունքները***

Հարց 12-րդ. Ինչո՞ւ է ուսանողների մի մասը ձգտում հեռավար ուսուցման:



Գծապատկեր 12. ***12-րդ հարցի արդյունքները***

- 41% - ավելի հեշտ է քննություններն ու ընթացիկ գնահատականները կեղծիքով ստանալը:
- 31% - ուսանողների մեծ մասը մարզերից են և չգալով համալսարան՝ խնայում են գումար ու մոտ են լինում իրենց ընտանիքներին:
- 20% - խնայելով ժամանակ՝ ուսանողների մեծ մասը համատեղում է աշխատանքն ու դասերը:
- 8% - COVID-ով վարակվելու և հարազատներին վարակելու հավանականության նվազեցման համար:

13-րդ հարցն ազատ շարադրանք էր նշումների տեսքով: Վերջինս և ընդհանուր հարցաթերթիկն ամփոփելով՝ կարելի է եզրահանգել, որ թեպետ բուհն արել է հնարավոր ամեն բան կրթական համակարգը բարձր մակարդակի վրա պահելու համար, այնուամենայնիվ, ՀՊՏՀ ուսանողների զգալի մասը հեռավար ուսուցումից դժգոհ է և նշում է մի շարք պատճառներ. Քննությունների և ընթացիկ ակտիվությունների արժանահավատությունը նվազում է, համակուրսեցուն ճանաչելու, բուհական միջավայրում գտնվելու, ուսանողական կյանքը վայելելու հնարավորությունից զրկվում է և այլն:

Եզրակացություն: Հիմնվելով գիտնականների կարծիքների և սեփական հետազոտության արդյունքների վրա՝ եզրահանգում ենք, որ այժմ իրականացվող ուսուցման ձևը կարելի է համարել ոչ թե հեռավար, այլ առցանց կրթություն, քանի որ հեռավար կրթության կարգը սահմանված չէ, և այժմ իրականացվող ուսուցումը ձևով հեռավար է, բայց բովանդակությամբ՝ առկա:

Լիարժեք հեռավար ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ են՝

- հատուկ մասնագիտական դասագրքեր՝ մուլտիմեդիայի ուղեկցությամբ,
- էլեկտրոնային դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, էլեկտրոնային գրադարան,
- թրեյնինգային համակարգչային ծրագրեր,
- համակարգչային լաբորատոր ծրագրեր,
- ստուգող-թեստավորող ծրագրեր,
- ուսումնական տեսաֆիլմեր, ներկայացումներ,
- ձայնագրություններ,
- հեռահաղորդակցության միջոցներով փոխանցվող այլ նյութեր:

Եվ ինչպես արդեն նշվեց վերևում, կրթությունը գոյություն ունի միայն հաղորդակցական միջավայրում, իսկ միջավայրի փոփոխության հետ փոխվում է նաև կրթությունը:

Եզրափակելով նյութը՝ ևս մեկ անգամ անդրադառնանք հարցաթերթիկի այն հարցին, թե ինչը կցանկանայինք, որ փոխվեր մեր բուհում կամ պարզապես կրթական համակարգում.

1. ուսանողն ուզում է մուտք ունենալ UMS էլեկտրոնային մատյան՝ հետևելու իր բացակայություններին ու ընթացիկ գնահատականներին, ինչից ուսանողն անցանց ձևաչափում շատ հաճախ զրկված է: Հնարավորություն տալով ուսանողներին մուտք գործել UMS՝ հետևելու իրենց «էլեկտրոնային օրագրին», թե՛ ուսանողները ու թե՛ դասախոսները կխուսափեն տարեվերջյան շատ ու շատ անակնկալ խնդիրներից, ինչպիսիք եղան 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ընթացքում, որոնց ես անձամբ ականատես եմ եղել թե՛ որպես խմբի ավագ և թե՛ որպես հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ:

2. Կիսամյակային բոլոր առարկաների նյութերն ու հարցաշարերը տեղադրվում են MOODLE համակարգում, որտեղ յուրաքանչյուր ուսանող ցանկացած պահի մուտք ունի, սակայն քննական շրջանի ավարտից անմիջապես հետո բոլոր նյութերն անհապաղ ջնջվում են, ինչը մեծ խնդրի առաջ է կանգնեցնում լուծարք ունեցող, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձած և անցած նյութը վերհիշել ցանկացող ուսանողներին:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ պետական կառավարման ակադեմիա, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, «Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու»:
2. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, գիտահետազոտական կենտրոն, «Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ»:
3. Evaluating the Effectiveness of Distance Learning in Higher Education during COVID-19 Global Crisis: UAE Educators' Perspectives.
4. https://education.forbes.ru/authors/online-obrazovanie?fbclid=IwAR38O3CnG5MDJL05gA0umc7s4hnPBRtJQB0N95xqrqfTFDO3AYctRBThY5Q
5. https://kantiana.ru/news/distantsionka-layfkhaki-po-onlayn-obucheniyu-ot-professora-bfu-im-i-kanta-svetlany-lonskoy/?fbclid=IwAR0n31vAOFHguK8lFOOoQPqWiI7u-nPgdPwXrazYDp5ZxvS9r2lr7V9e1Ug
6. https://www.iol.co.za/technology/the-difference-between-online-learning-and-remote-learning-50287310
7. https://paara.am/distance-master-program/
8. https://en.unesco.org/news/how-china-ensuring-learning-when-classes-are-disrupted-coronavirus
9. https://edition.cnn.com/2020/02/28/asia/remote-school-education-intl-hnk/index.html
10. https://www.researchgate.net/publication/242284461_In_case_you're_asked_The effectiveness_of_distance_education
11. https://iz.ru/995078/iaroslava-kostenko/bolnaia-peremena-50-shkolnikov-schitaet-onlain-obuchenie-kanikulami?fbclid=IwAR0GDK9b_kXhAhe3Au4LLf8A3B2Ig7XvQrLt0Q4PRUSempfZpJZHx9yEbW8
12. http://www.eib.am/online-education/

13. https://www.cedtech.net/download/evaluating-the-effectiveness-of-distance-learning-in-higher-education-during-covid-19-global-crisis-10945.pdf?fbclid=IwAR1NkZweB5KB640IT5IeyW9kRiBOXwBbEV6g5jfF1fX7F0bOuOYcU-gxaa4
14. https://heravar.armedu.am/
15. https://ge.boell.org/en/2020/05/27/heravar-krtowtyan-kazmakerpowme-covid-19-i-paymannerowm
16. https://evnreport.com/arm/raw-unfiltered-arm/distance-education-in-times-of-coronavirus-2/
17. https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLScVz4vt86FvdtJT0Nd53gLFLYidEHXL6IqWgPzv5Hzofc-TTQ/viewform

КРИСТИНА АКОПЯН
Бухгалтерский учет и аудит
бакалавриат, 3-й курс

ПРОБЛЕМЫ ДИСТАНЦИОННОГО ОБРАЗОВАНИЯ НА ПРИМЕРЕ АГЭУ

Ключевые слова: *дистанционное образование, информационные коммуникации и технологии, эффективность, образовательная система*

Основной целью статьи является выявление проблем дистанционного образования в условиях COVID на примере АГЭУ. Дистанционное образование является альтернативной формой образовательной программы, к которой образовательная система еще не была готова как с точки зрения наличия необходимых инструментов, так и в плане овладения необходимыми навыками.

CHRISTINA HAKOBYAN
FACULTY:Accounting and auditing
Bachelor's Degree, 3 rd Year

THE PROBLEMS OF DISTANCE EDUCATION WITH THE EXAMPLE OF ASUE

Keywords: *distance education, information communication and technologies, efficiency, educational system*

The main goal of the article is to identify the problems of distance education in the conditions of COVID, based on the example of ASUE. Distance education is an alternative form of educational program, for which the educational system was not yet ready, both in terms of having the necessary tools and skills to organize the process smoothly.